№ 284 ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24

1904
ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24 № 284

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ **1905** ԹՒԱԿԱՆԻՆ

(33-ՐԴ ՏԱՐԻ)

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 բուբլի, եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակները և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ» իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Դեկտեմբերի 20-ի գիշերը վախճանվեց բժշկականութեան դոկտոր

ՍՏԵՓԱՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ ԱՆԱՆԵԱՆ

որի մասին յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի այրին և զաւակները։ Հոգեհանգիստը՝ ուրբաթ, դեկտեմբերի 24-ին և շաբաթ, 25-ին, երեկոյեան ժամը 7-ին հանգուցեալի բնակարանում (Դօլգովինսկի պրոսպ. սեփ. տ.)։ Յուղարկաւորութիւնը կիրակի, դեկտեմբերի 26-ին, առաւօտեան ժամը 10 ին դէպի Զրկինենց եկեղեցին, Գրիբոէդովսկի փողոցի վրա. թաղումը Վերայի գերեզմանատանը։ 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պօրտ-Արտուր և Վլադիվոստոկ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ Շիկահողից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Վաքիլբաշի։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ ԵՒ ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ

Մենք տուինք տեղեկութիւններ Պօրտ-Արտուրի առման նախնական գործողութիւնների մասին։ Մեր ընթերցողները այսօրվայ հեռագիրներից կը ծանօթանան այն պայմանների հետ, որոնք համաձայնութեան կէտեր են ճանաչվել պաշարող և պաշարված զօրքերի համար, նախ քան բերդի վերջնականապէս յանձնելը։

Թէ ինչ փոփոխութիւններ առաջ կը բերէ Պօրտ-Արտուրի անկումը պատերազմող կողմերի բանակների շարժման մէջ, առայժմ ոչինչ չէ կարելի ասել։ Պօրտ-Արտուրը, որ մինչև այժմ կազմում էր ռուսաց բանակի և նաւատորմի շարժման նպատակակէտերից մէկը և մի տեսակ առանցքի դեր էր կատարում պատերազմական գործողութիւնների մէջ, պէտք է տեղի տայ, գոնէ ժամանակաւորապէս, ուրիշ կենտրոնների, որոնցից մէկն է Վլադիվոստոկը։

Ռուսաց այդ հին նաւահանգիստը (տես H. B.) այժմ բաւական ամրացված է։ «New-Iork-Herald» լրագրի տեղեկութիւններից երևում է, որ ներկայումս քաղաքի շրջակայքում գտնվող 17 բարձր բլուրների վրա հաստատված են ծանր թնդանօթներ, կառուցված են ամուր ժարակոցներ։ Այն անձինք, որոնք ապրում են բլուրների վրա՝ զետեղված են զրահապատ կայարաններում և ոչ մի յարաբերութիւն չունեն քաղաքի հետ։ Բլուրների ստորոտները անմերձենալի են դարձրած մետալեայ թելերից շինած ցանկապատներով 8 ոտնաչափ բարձրութեամբ։

Վլադիվոստոկի շրջակայքում գտնված մացու կենդանիները մորթվում են մսի պաշարներ նախապատրաստելու համար։ Տեղական պահեստներում ամբարվում է ահագին քանակութեամբ ցորեն։ Ամեն օր դիտողութիւններ են կատարվում օդապարիկի միջոցով վարժութիւն ձեռք բերելու նպատակով։ Շինված է երկաթուղի մինչև քարածխի հանքը, որ նորերս գտնվել է Վլադիվոստոկ քաղաքից 15 վերստ դէպի հարաւ։ Այդպիսով Վլադիվոստոկը ապահովված է վառելիքի կողմից։ Քաղաքի և Տուման գետի միջև այրում ծովափի գծով իւրաքանչիւր 20—30 վերստի վրա շինված են կայաններ զօրքերի համար։

Եապօնացիները ուշադրութիւն են դարձրել ռուսական պատրաստութիւնների վրա և ուղարկում են այն կողմերը որոշ քանակութեամբ զօրքեր։

Մենք առաջիկայ տարում կը ծանօթացնենք մեր ընթերցողներին Վլադիվոստոկի շրջանի հետ և կը տանք նրա տեղագրական քարտէզը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Դպրոցական նախապաշարմունքների դէմ վաղուց կռուում են առողջ միտքը և ժամանակակից գիտութեան մշակած տարրական ճշմարտութիւնները։ Կռիւը կայ, բայց դպրոցական հնասէր աւանդապահութիւնը շատ զօրաւոր է զիջումներ անում։ Թէև զօրաւոր, բայց կլի անում է։ Երկարատև, յամառ կռիւից յետոյ կարելի եղաւ վերացնել հնութեան թողած այն աւանդութիւնը, որ կոչվում էր հարցաքննութիւն։ Մի ժամանակ կարծում էին, որ եթէ չնչվի այդ հրապարակական տանջանքը, աշխարհի վրա այլ ևս չի մնայ մանկավարժութիւն ասած բանը։ Բայց ահա առողջ դատողութիւնը յաղթանակեց, հնապաշտական վայնասունը տեղի տուեց իրողութեան և մանկավարժութիւնը, ինչպէս յայտնի է, այժմ էլ շատ լաւ տանում է իր գործը առանց հարցաքննութիւնների։ Հիմա հերթական է դարձել մի ուրիշ մանկավարժական նախապաշարմունք։ Դա թուանշանների հարցն է։ Իւրաքանչիւր ծնող գիտէ, թէ դա որքան տանջում, չարչարում է խեղճ երեխաներին։ Փոխանակ դասաւանդութեան եղանակը լաւացնելու, փոխանակ աշակերտի անհատական ընդունակութիւնները բնական ճանապարհով զարգացնելու, մանկավարժը թուանշանների միջոցով է չափում երեխայի առաջադիմութիւնը, զեկավարվելով այն սկզբունքով, որ մէկին լաւ, միւսին վատ թուանշան նշանակելով, կարելի է քիչ ընդունակութիւն ունեցողին հարկադրել, որ նա էլ առաջ գնայ։ Սակայն այդպիսի հարկադրանքով ոչինչ չէ կարելի անել, բացի միայն նրանից, որ երեխան յուզվում, տանջվում է, լաց է լինում և սովորում է վերաբերվել իր ուսուցչին այնպէս, թէ նա կամ անարդար է, կամ չէ սիրում իրան կամ ուղղակի կողմնապահ է։ Այս պատճառներով է, որ «Новое Обозрѣніе» լրագրի մէջ մի, ինչպէս երևում է, մանկավարժ բողոքում է թուանշանների սիստեմի դէմ։

Հասարակական կեանքի բոլոր խաւերում —ասում է նա—կան նախապաշարմունքներ

հալած ոսկի ըլի, ոսկի։ Դու գիտում ես, թէ ես քեզ հասարակ արաղ եմ ուզում խմացնել. սա արաղ չի. ուրիշ զատ ա։

—Բա որ արաղ չի, էդ ինչ ա,—հարցրեց խիստ հեռաքրքրված տանուտէրը։

—Կանեակ ա, կանեակ։

—ԿանեաՀ. դա ինչ զատ ա։

—Փռանգի արաղ ա։

—Փռանգի արաՀ. իմ օրումը խմած չեմ. դէ մի ածա, տեսնեմ,—ասաց Աղասին։

—Էդ էն է, էդ էն տղամարդ կաց, ուղբաշի Աղասի,—ասաց ուրախացած վաքիլ Մարութը,—էդ էն արաղ գերնատուրն ա խմում, նաչալնիկն ա խմում, կենտ կենտ էլ երևի պրիստաւն ա խմում. էդ մեծ պատիւ ա մեզ համար. Գուրգէնն ապրի։

—Համ արաղը կը խմենք, համ մեր բանը կանենք, ուզբաշի Աղասի, միամիտ կաց,—ասաց վաքիլ Գիւլունց Քիքին։

Գուրգէնը ածեց կօնեակը. վաքիլ բաշին ու վաքիլները մի-մի բաժակ խմեցին, որի վրա պանիր, հաց ու ձուկը նախաճաշեցին ու նրանց վրա էլի մի-մի հատ հրաշալի հեղուկից կուլ տուին «խռւայ, էս ա զատ հա», կրկնելով ամեն մի բաժակի վրա։

—Փռանգի տունը չը քանդվի. էս ա զատ որ նա հնարել ա հա. աշխարհիս իմաստութիւնը նրանա տուած տեղումն էլի,—ասաց Ծատուրը,—ինձ եթէ օրը մի թաս սրանից ան, կեանքս մահու կը տամ մեր հասարակութեան համար։ Հրաշալի տպաւորութեան տակ յանձնաժողովը դուրս եկաւ Գուրգէնի տնից։

—Գուրգէն, քեզ մատաղ,—ասաց փափկած տանուտէրը հայաթով անցնելիս,—որ ազատ ժամանակ ունենաս, էս աղբերը մի հանգով հեռացրու հայաթէդ, արևիդ մատաղ։ Որ բանն ինձ մնայ, քեզ իսկի չեմ նեղացնիլ. բարձր իշխանութիւնը հրաժայել ա. ճար չի կայ, պէտք ա կատարենք. նաչալնիկը գալ պիտի. հրամանը Պետերբուրգէն ա։

—Լաւ, Աղասի ամի,—ասաց Գուրգէնը,—մինչև միւս կիրակի իմ հայաթում մի չոփ անգամ չի լինիլ. ամեն բան կը հեռացնեմ. գոսերս էլ կը մաքրեմ։

—Ատա Գուրգէնը կանի, դա իրան խօսքին հաստատ ա,—ասաց Մարութը,—Գուրգէնի աբեին մատաղ ես. դրա պէս տղամարդ մեր գեղումը չը կայ. ինչ մեր գեղումը, էս սաղ սհալը եթէ քանդես, ոչ մի գեղում էդհէնց արտաբաց տղամարդ չես գտնիլ։ Եկէք հիմի, եկէք գնանք տեսնանք՝ Աւագիմն ինչ բանի ա։

—Էսօր գնանք Աւագիմի տունը,—հարցրեց տանուտէրը։

—Հա. բա ինչ. տասը գոմ ունի նա. մինչև նրա գոմերը կը պատենք, օրը կը մթնի,—ասաց վաքիլ Քիքին։

—Էսօր պէտք ա անպատճառ Աւագիմի դաղնանէն *) պրծնենք, որ էգուց կարողանանք գեղի ներքի թաղը մանգանք,—ասաց Ծատուրը։

—Լաւ էք ասում, գնանք,—ասաց տանուտէր Աղասին։

Ցանձնաժողովը գնաց գիւղի միւս հարուստի, Աւագիմի տունը։

(Կը շարունակվի)

*) Քննութիւնը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՔԻԼԲԱՇԻՆ

IV

Հայաթից հայաթ, փողոցից փողոց անցնելով առողջապահիկ խումբը կէսօրից մօտիկ հասաւ գիւղի հարուստ առևտրական Գուրգէնի հայաթը, որտեղ իրար կողքի շարված էին աղբի մի քանի կոյտեր։ Տանուտէրը անագին աղմուկ բարձրացրեց, վաքիլները ձայնակցեցին նրան. աղմուկը լսելով, Գուրգէնը դուրս եկաւ խանութից։ Նրան տեսնելով, բարկացած պաշտօնեաները մեղմացրին իրանց ձայները ու համոզել սկսեցին, որ մաքրէ իր հայաթն ու գոմերը, օրինակ տայ ուրիշներին, այնպէս չանի, որ ստիպված լինեն նրա քէֆին դիպչել։ Վաքիլբաշին Գուրգէնին էլ յիշեցրեց, որ հրամանը «Պետրիպոլկէն» է։ Այդ բառը նա արտասանում էր մի տեսակ խորհրդաւորութեամբ, ուժգին շեշտելով Ο հնչիւնը. նա նրա աչքում մի ահագին, գերբնական զօրութիւն ունէր։ Այդ բառը բարձրացնում էր նրա պրեստիժը ամբոխի աչքում, խոր տպաւորութիւն էր թողնում վերջինիս վրա, ուստի տանուտէր Աղասին իր թէ պաշտօնական և թէ ոչ-պաշտօնական խօսակցութեան մէջ տեղի-անտեղի գործ էր ածում նրան։

—Լաւ, լաւ, ասաց Գուրգէնը,—կը մաքրեմ հայաթս, աղբերը դուրս կը տանեմ. էս մի երկու օրը բանս շատ ա. շուտով կը սկսեմ. հիմի եկէք գնանք տուն. արևումը կանգնել մի՞ք. շատ ա կէծ՝ու շոգ։

—Ի՞նչ կայ տանը,—հարցրեց տանուտէրը։

—Քո ի՞նչ բանն ա, թէ ինչ կայ,—ասաց վաքիլ Քիքին,—էդ մարդը կանչում ա, գնանք էլի։

Միւսներն էլ նրա ետևից կրկնեցին՝ «գնանք»։ Աղասին չը կարողացաւ ընդիմադրել իր իշխաններին. նրանք ներս մտան։ Գուրգէնը պահարանի խորքից հանեց արաղի մի շիշ, գեղեցիկ յայտարարանկարներով ծածկված։ Շիշը հէնց իր արտաքին անսովոր տեսքով խկոյն յափշտակեց հիւրերին։ Տանուտէրը, նկատելով բանն ինչումն է, հաւատարիմ մնալով իր որոշման, բացականչեց՝

—Չէ, չէ, չէ. էդ անկարելի բան ա. բարձր իշխանութեան հրամանը թունդ ա. էդ ուզում չեմ։

—Այ դու գլուխդ քարոմն ես, տալիս,—ասաց բարկացած Ծատուրը,—ի՞նչ չուզես ուզում. ուրիշ ժամանակ բօթիլկէն արաղի հետ հօ կուլ կը տաս։

—Ա՛ Ծատ, դու ուզում ես ինձ բէյարուռ անէս, խայտառակես մեր իշխանութեան ու հասարակի առաջին,—ասաց Աղասին։

—Բա դու էլ ուզում ես ինձ սոված ու ծարաւ սպանէս,—ասաց Ծատուրը։

—Գուրգէն, արաղն ածա, մտիկ մի տալ,—ասաց Մարութը։

—Ատա՛ արաղ չի, արաղ. մի լաւ մտիկ տուէք, ձեր աղբաթը խէր ըլի, տեսէք էս ինչ զատ ա,—ասաց Գուրգէնը,—Աղասի ամի,—դարձաւ նա տանուտէրին,—մի տես՝ հէնց ա հալած ոսկի ըլի, ոսկի։ Դու գիտում ես, թէ ես քեզ հասարակ արաղ եմ ուզում խմացնել. սա արաղ չի. ուրիշ զատ ա։

—Բա որ արաղ չի, էդ ինչ ա,—հարցրեց խիստ հեռաքրքրված տանուտէրը։

—Կանեակ ա, կանեակ։

—ԿանեաՀ. դա ինչ զատ ա։

—Փռանգի արաղ ա։

—Փռանգի արաՀ. իմ օրումը խմած չեմ. դէ մի ածա, տեսնեմ,—ասաց Աղասին։

—Էդհէնց է, էդհէնց տղամարդ կաց, ուղբաշի Աղասի,—ասաց ուրախացած վաքիլ Մարութը,—էդհէնց արաղ գերնատուրն ա խմում, նաչալնիկն ա խմում, կենտ կենտ էլ երևի պրիստաւն ա խմում. էդ մեծ պատիւ ա մեզ համար. Գուրգէնն ապրի։

—Համ արաղը կը խմենք, համ մեր բանը կանենք, ուզբաշի Աղասի, միամիտ կաց,—ասաց վաքիլ Գիւլունց Քիքին։

Գուրգէնը ածեց կօնեակը. վաքիլ բաշին ու վաքիլները մի-մի բաժակ խմեցին, որի վրա պանիր, հաց ու ձուկը նախաճաշեցին ու նրանց վրա էլի մի-մի հատ հրաշալի հեղուկից կուլ տուին «խռւայ, էս ա զատ հա», կրկնելով ամեն մի բաժակի վրա։

—Փռանգի տունը չը քանդվի. էս ա զատ որ նա հնարել ա հա. աշխարհիս իմաստութիւնը նրանա տուած տեղումն էլի,—ասաց Ծատուրը,—ինձ եթէ օրը մի թաս սրանից ան, կեանքս մահու կը տամ մեր հասարակութեան համար։ Հրաշալի տպաւորութեան տակ յանձնաժողովը դուրս եկաւ Գուրգէնի տնից։

—Գուրգէն, քեզ մատաղ,—ասաց փափկած տանուտէրը հայաթով անցնելիս,—որ ազատ ժամանակ ունենաս, էս աղբերը մի հանգով հեռացրու հայաթէդ, արևիդ մատաղ։ Որ բանն ինձ մնայ, քեզ իսկի չեմ նեղացնիլ. բարձր իշխանութիւնը հրաժայել ա. ճար չի կայ, պէտք ա կատարենք. նաչալնիկը գալ պիտի. հրամանը Պետերբուրգէն ա։

—Լաւ, Աղասի ամի,—ասաց Գուրգէնը,—մինչև միւս կիրակի իմ հայաթում մի չոփ անգամ չի լինիլ. ամեն բան կը հեռացնեմ. գոսերս էլ կը մաքրեմ։

—Ատա Գուրգէնը կանի, դա իրան խօսքին հաստատ ա,—ասաց Մարութը,—Գուրգէնի աբեին մատաղ ես. դրա պէս տղամարդ մեր գեղումը չը կայ. ինչ մեր գեղումը, էս սաղ սհալը եթէ քանդես, ոչ մի գեղում էդհէնց արտաբաց տղամարդ չես գտնիլ։ Եկէք հիմի, եկէք գնանք տեսնանք՝ Աւագիմն ինչ բանի ա։

—Էսօր գնանք Աւագիմի տունը,—հարցրեց տանուտէրը։

—Հա. բա ինչ. տասը գոմ ունի նա. մինչև նրա գոմերը կը պատենք, օրը կը մթնի,—ասաց վաքիլ Քիքին։

—Էսօր պէտք ա անպատճառ Աւագիմի դաղնանէն *) պրծնենք, որ էգուց կարողանանք գեղի ներքի թաղը մանգանք,—ասաց Ծատուրը։

—Լաւ էք ասում, գնանք,—ասաց տանուտէր Աղասին։

Ցանձնաժողովը գնաց գիւղի միւս հարուստի, Աւագիմի տունը։

(Կը շարունակվի)

*) Քննութիւնը։

և հնապաշտութիւնը, բուտինան լափում է մարդկանց, բայց մանկավարժական աշխարհը մանաւանդ առատ է ամեն տեսակ մոլորութիւններով։ Թանաշանները, լինելով մէկը հակամանկավարժական միջոցներից, պահվում են մինչև այժմ ոչ թէ այն պատճառով, որ նրանց վաւերացնում է բանականութիւնը, լուրջ փորձը, այլ լոկ այն պատճառով, որ մենք, «մանկավարժներս», ընտանեցել ենք նրանց և չենք ուզում բաժանվել մեր սիրած սիստեմից, որովհետև սովորել ենք նրան։ Զը նայած որ թանաշանների սիստեմը, նոյն իսկ շատ հարևանցի վերլուծութեան ենթարկելով, սապնափրփուրի պէս ոչնչանում է, մենք դարձեալ շարունակում ենք անկարեկից կերպով դիտել, ամսական ցուցակները բաժանելիս, երեխաների արտասունքները, որոնք ոչ ոքին հարկաւոր չեն։

«Դաստիարակիր մարդուն համաձայն բնութեան»,—ասել է դեռ Ամոս Կոմենսկին։

Այս բարձրագոյն սկզբունքը այժմ էլ յենակէտ պիտի դառնայ այս կամ այն մանկավարժական սիստեմի «բարելաւութիւնը» որոշելու ժամանակ։ Ինչպէս բնութիւնը, զարգանալով բնականաբար, իր, այսպէս ասած, ներքին օրէնքներով չէ սիրում մի օտար ձեռքի անհմուտ և անժամանակ միջամտութիւնը, այնպէս էլ երեխայի զարգացումը, որ կատարվում է նոյն անխախտ օրէնքներով, անճոռնիանում և կանգ է առնում դեկա[illegible] երի անզգոյշ և անհմուտ ազդումից։ [illegible]ն մի երեխայ պիտի զարգացնէ իր մէջ այն եռանդը, որ կրում է նրա օրգանիզմը իր մէջ։ Իսկ մենք հինգերից և չորսերից մի գրաւչութիւն ստեղծելով աշխատում ենք մրցութեան միջոցով դուրս մղել միջին ընդունակութեան տէր երեխաներից աւելի շատ ոյժ, քան նրանք ունեն։

Անհեթեթութիւնը աւելի քան պարզ է։ Հին նախապաշարմունքներից ազատվելը ցանկալի է իւրաքանչիւր հասարակական գործի համար։ Առանց դրան չը կայ առաջադիմութիւն։ Իսկ մանկավարժութիւնը, որ գործ ունի երեխաների սրտի ու մտքի հետ, որքան շատ պիտի աշխատէ առաջադիմութեան ճանապարհով անդադար, հաստատ ու խոշոր քայլերով առաջ գնալու։

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Կարա-Մուրզայի համերգը.—Հայոց ներկայացումներ Վէտցելի դահլիճում.—Հայոց ներկայացումներ Եկատերինոդարում և Գանձակում)։

I

Պ. Կարա-Մուրզա կիրակի, դեկտեմբերի 26-ին, կը տայ Թիֆլիսի ժողովարանում հայերէն մի համերգ բաղկացած երեք բաժնից, ընդամենը 15 երգից։ Երգերը մշակված և ներդաշնակված են հանգուցեալ Քր. Կարա-Մուրզայի ձեռքով։ Համերգին մասնակցում է 50 հոգուց բաղկացած երգեցիկ մի խումբ։

II

Երկուշաբթի, դեկտեմբերի 20 ին, Վէտցելի թատրոնական դահլիճում խաղացվեցին «Բաղդասար Աղբար» և Յ սր. Եսայեանի «Սոնայի նշանդրէքը» վոդեվիլը։ Խաղն ընդհանրապէս բաւարար անցաւ։ Աչքի էր ընկնում պ. Սանթուրճեանը բաւական բնորոշ և հետաքրքրական խաղով։ Վոդեվիլն էլ անցաւ աշխոյժ և շատ զուարճացրեց հասարակութեանը։ Թատրոնը լի էր հանդիսականներով։

Եկող չորեքշաբթի օր, դեկտեմբերի 29-ին, Վէտցելի թատրոնում, պ. Յ. Տէր-Գրիգորեանի ժամանակութեամբ թատերասէրները կը ներկայացնեն հայերէն «Խուզարկու» կոմեդիաֆարսը, թարգմ. ռուսերէնից։

III

Նոյեմբերի 21-ին, կիրակի երեկոյեան, Եկատերինոդարի գործակատարների ժողովարանի դահլիճում թատերասէրների նորակազմ ընկերութեան ձեռքով տեղի ունեցաւ մի ներկայացում։ Խաղացին Դեսէլնիկօի «Զոհի փոխարէն զոհ» 3 գործողութեամբ կոմեդիան՝ թարգմանութիւն Ռշտունու և վերջում «Il n'est pas ici» վոդեվիլը Նոր Նախիջևանի բարբառով։

Ներկայացումը դհանրապէս անցաւ միջակ. այս անգամ միջակ խաղաց նոյն իսկ դերասան Խարազեանը (Բէչարով)։ Ընդհանուր միջակ թեան մէջ այնու ամենայնիւ իրանց խաղով աչքի էին ընկնում միւս դերակատարներից օր. Կիւրեղեանը (Օլգա Ալէքսէէվնա) և պ.պ. Ելեցի-խանը (Յակոբ, Ալիսովի ծառան) և Տուրփայեանը (Ալիսով)՝ կոմեդիայում, և պ. Ցիլինեանը՝ վոդեվիլի մէջ (կոմիկ ծառայի դերում)։ Իսկ մնացած դերակատարները թոյլ էին, մանաւանդ պ. Ա. Յովսէփեանը (Վիրսկի)։ Գոնէ այսպէս էր խաղ. միջոցներին հանդէսատես հասարակութեան և նախկին թատերասէրների քննադատութիւնը։

Գալով Նոր Նախիջևանի բարբառով գրված պիեսին՝ պէտք է ասել, որ պիեսը բեմին տալիս էր բալագանի կերպարանք։

Թատրոնը կիսով չափ դատարկ էր։

Դեկտեմբերի 12-ին, կիրակի երեկոյեան, երկրորդ հասարակական ակմբանոցի դահլիճում նոյն թատերասէրների նորակազմ ընկերութեան ձեռքով տեղի ունեցաւ երկրորդ ներկայացումը։ Այս անգամ խաղացին «Եղբայր և քոյր» Դուսինայի 5 գործողութեամբ պատմական դրաման՝ թարգմ. Տէր-Դաւթեանի։

Թէև պիեսան արհեստական հիւսուածքի տըպաւորութիւն է թողնում, ուր հեղինակն ընկնում է արտաքին էֆէկտների, քան ներքին բովանդակութեան ետևից, սակայն ներկայացումն ընդհանրապէս լաւ անցաւ։

Ի դէպ պէտք է ասել, որ մեր հասարակութիւնն ընդհանրապէս կարգապահ չէ ներկայացումների ժամանակ։ Պէտք է ասել նոյնպէս, որ առաջին գործողութեան մէջ դերակատարներից մի քանիսները ցածր էին խօսում, այնպէս որ վերջին կարգերում բոլորովին չէր լսվում,—և այդ իսկապէս առաջացաւ նրանից, որ ներկայացումն սկսող առաջին դերակատարը ցածր տոնով սկսեց խօսել։ Թատրոնում կար բաւականաչափ հասարակութիւն, որ գոհ մնաց ներկայացումից։

Այդպիսի ներկայացումները շարժում և կենդանութիւն են առաջ բերում տեղիս մեռած հասարակական կեանքում։ Ներկայացում կազմակերպողներն արժանի են շնորհակալութեան։

Խ. Բաբայեան

IV

Գանձակ քաղաքում, դեկտեմբերի 19-ին, երաժշտութեան ուսուցչուհի տիկին Օ. Ի. Կամենեցկայա տեղական օրիորդաց գիմնազիայի դահլիճում սարքեց մի հանրամատչելի երաժշտական ցերեկոյթ։ Տիկնոջ աշակերտուհիներն ու աշակերտներից մինը աչքի ընկնող հմտութեամբ ու շնորքով նուագեցին դաշնամուրի վրա մի շարք գեղեցիկ պիէսաներ. լաւ էին նուագում օրիորդներ Աննա Հալաբեան, Սարաջեվա, Ցերալեան, Ժդանովա և Աֆանասեան ու գիմնազիստ Իրակլի Ցերցվաձէ։ Հասարակութիւնը գոհ մնաց ցերեկոյթից ու յայտնեց տիկին Կամենեցկային անկեղծ շնորհակալութիւն. տիկնոջ եռանդը գովելի է»։

Ս. Տ. Ա.

ՆԱՐԱԿ ՇԻԿԱՀՈՂԻՑ

(Զանգեզուրի գաւառ)

Նոյեմբերի 24-ին

Արազի ափերին բնակվող, մաքսանենգութիւնը արհեստ արած մեր թուրք հարևանները, ինչպէս առանց մարգարէ լինելու գուշակել կարելի էր, Պարսկաստանից այս կողմ անցկացրին խոլերան, որ արազնափեայ մի քանի թուրք գիւղերում օրէցօր աւելի ու աւելի աւերումներ անելով, ստիպել է Զանգեզուրի չորրորդ գաւառամասը համաճարակով վարակված համարել։ Շիկահողի կամ Շիխավ-ի հասարակութիւնն էլ մտնում է այդ գաւառամասի մէջ, ուրեմն և աւելորդ չէ երկու խօսք ասել նրա առողջապահական պայմանների մասին։

Այդ հասարակութիւնը կազմող Շիկահող, Սրաշէն, Հանդ, Կեմանց, Շկետ, Մազրա և մի քանի թուրք գիւղերից, որը կուզէք մտէք, մէկը միւսի բաղդակիցն ու պատճէնն է. չորս կողմը կանգնած են փոքր բլուրներ ներկայացնող վիթխարի աղբահիւսեր, դիւղ հիմնված օրից են հաստատվել պապական այդ աւանդները, որ օրէօր մեծանալով, որպէս անմաքրութեան հսկայ պահպաններ, որպէս ամեն տեսակ հիւանդութիւնների անսպառ աղբիւր, բարձրագոյնս ցցվել են շուրջանակի։ Թողէք այդ բլուրները, առաջ անցէք. ամեն տան առաջ մի աղբակոյտ կայ, հսկայ աղբահիւսերի փոքրիկ օգնականներ։ Անցք սրահը, տունը, այստեղ արդէն այնպիսի անմաքրութիւն է իշխում, որ դժուարանում էք հաւատալ, թէ մարդիկ են ապրում. իսկ ինչ գիւղացու Զատկից-Զատիկ լուացվող շորերը, Զրօրհնէքից-Զրօրհնէք ջրի երես տեսնող գլուխ ու մարմինն են ներկայացնում, այդ արդէն անհնար է գրել։ Կեղտոտութիւն ամեն տեղ, անմաքրութիւն ամեն բանում։ Գիւղացին էլ հազար ու մի պատճառաբանութիւններ ունի. «մեր պորտը փէյինով է պնդել, մենք որ փէյինի հոտ չառնենք, կը հիւանդանանք, թաժուզութիւն ինչ է, մարդս իր ճակատի գրածը պիտի քաշի, առողջ եղան փթած դարմանն ինչ կարող է անել և այլն և այլն»։

Այսպիսի հակացողութիւնն ու նրա հետևանք աղբակոյտ ու ամեն տեսակ անմաքրութիւն քամել են գիւղերի առողջութիւնը. Սրաշէն գիւղում տարին բոլոր յարատևում են բորոտութիւն, ջերմ ու տենդ, հարինք և այլն, գիւղ մտնողը կարծում է հիւանդանոցի բնակիչների հետ գործ ունի. Շիկահողում ձմեռն անգամ ջերմ ու տենդը, գլուխը կախ բանի է լինում. նոյն վիճակն ունեն Շկետն ու Հանդը։ Այնպէս հիւծված է բնակչութեան առողջութիւնը, որ մարդ սոսկում է այն մտքից, թէ ինչ սարսափելի աւերածներ կարող է անել դաժան հիւրը։ Ամենամեծ դժբաղդութիւնն այն է, որ բնաւ մտածող չը կայ այդ մասին, ստիպող, հասկացնող, իսկ գիւղացին շարունակում է ձեռները ծալած, յոյսն Աստուծու վրա դրած սպասել ճակատագրի վճռին։

Երբ դեռ խոլերայի ուրուականն էր միայն մէջտեղ, նրա գոյութեան մասին հեռուից-հեռու էր լսվում, խիստ միջոցներ ձեռք առնվեցան. մտրակի ու տուգանքի սովոր մեր գիւղացին ջանաց ստեղծել պահանջված արտաքին մաքրութիւնը, դուրս բերեց տունը շինած օրից նրա պուճախներում կիտած ամեն տեսակ փսոր ու զիբիլ, ալեց բակ ու գոմ, մաքրեց փողոցները, նոյն իսկ մտածեց հսկայ աղբահիւսերի տեղն անգամ սրբել, և եթէ մի երկու շաբաթ այդպէս շարունակվէին ձեռք առած միջոցները, ինչ խօսք, որ այժմ երբ ուրուականի տեղ ինքը համաճարակն է այցելում, շատ քիչ բան կը մնար բոլորովին ապահով դրութեան մէջ դնելու մեր գիւղերը։ Սակայն հէնց որ լռեց սպառնացող ձայնը, հէնց որ մտրակի ու տուգանքի սարսափը վերացաւ մէջտեղից, գիւղացին ազատ շնչեց ու օրհնեց խաթրապահ «քուչաբէգի», քէֆամոլ տանուտէրի կեանքը, որ ազատեցին գիւղացուն աւելորդ ու անմիտ աշխատանքից։

Խոլերան արդէն մտեցել է մեզ. ամեն րոպէ կարող է մեր օձիքից բռնել, յանցաւոր անտարբերութեան ու դատապարտելի անգործութեան հաշիւը պահանջել ու առատ պաշարով առաջ անցնել. այս կրիտիքական րոպէին անգամ մեր գեղջուկը ձեռները կրծքին խաչած, աչքերը երկինք յառած, երկիւղն ու յուսահատութիւնը սրտում, պինդ նստել է ու անհամբեր ճակատագրին սպասում։

Սկված է անվերջ ժատաղների ու ժամպատարագների շրջանը. չար թշնամուն յետ վանելու մտքով ուլեր ու եզներ են իրանց արիւնը գիւղի անմաքրութեան վրա աւելացնում, կեր ու խումեր, կարմիր գինի, թունդ օղի հանդէս գալիս... Մինչդեռ այդ բոլորի գնով ոչ միայն աղբահիւսեր վերցնել հնար է, այլ և անհրաժեշտ դեղերի փոքրիկ դեղատուն պահել, մատչելի բրօշիւրների ահագին կոյտեր սփռել... Սակայն ո՞ւր անձնուէր, ուրիշի համար մտածողներ մի կեղեքված, խեղճ ու կրակ հասարակութեան մէջ...

Մնում է իշխանութիւնը ամենախիստ միջոցներով անել տայ այն, ինչ միահամուռ ոյժով արդէն արված պիտի լիներ. այդ պատճառով էլ անչափ զարմանալի ու անհասկանալի է այսպիսի անուշադրութիւն ու յապաղումը։

Տ. Գէորգեանց Սուլթան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 22-ին Թիֆլիսի զինուորական տաճարում հոգեհանգիստ կատարվեց Պօրտ-Արտուրում դեկտեմբերի սկզբին սպանված Կովկասի բնակիչ գեներալ լեյտենանտ Ռ. Ի. Կօնդրատենկօի համար։ Հանգուցեալը 7 դ հրացանաձիգ դիվիզիայի հրամանատարն էր։ Նա սպանվել է եապօնացիների պայթեցրած մի ժարտկոցի մէջ։ Հոգեհանգստին ներկայ էին հանգուցեալի ազգականները և բարեկամները, զինուորական և ինժենէրական վարչութիւնից շատ պաշտօնեաներ և աղօթող հասարակութիւնը։

—

Դեկտեմբերի 21-ին կայացաւ Թիֆլիսի վերաց դրամատիկական ընկերութեան ընդհանուր ժողովը։ Ժողովը միաձայն որոշեց Զուբալով եղբայրներին ընտրել ընկերութեան պատուաւոր անդամ։ Պէտք է յիշել, որ Զուբալով եղբայրները 5,000 ր. նուիրել են ընկերութեանը։ Յետոյ քննութեան ենթարկվեցին Կովկասի զանազան քաղաքներից եկած խնդիրները բանալ այդ քաղաքներում ընկերութեան մասնաճիւղեր։ Քննութիւնից երևաց, որ ընկերութիւնն իրաւունք չունի բանալ մասնաճիւղեր միւս քաղաքներում, այլ համաձայն կանոնադրութեան § 25 դի՝ գաւառներում կարող են կազմակերպվել 5 հոգուց բաղկացած յատուկ կոմիտէներ, որոնք կարող են ներկայացումներ տալ իրանց պատասխանատուութեամբ։ Յետոյ որոշվեց առաջիկայ յունիսի 22-ին հանդիսաւոր կերպով տօնել ընկերութեան գոյութեան 26 ամեակը, ակտ կազմելով և հանդէսի ժամանակ կարդալով ընկերութեան գործունէութեան պատմութիւնը, իսկ երեկոյեան յօբելեանական ներկայացում տալով։ Ծրագրի մանրամասն մշակութիւնը թողնվեց ընկերութեանը։ Հաստատվեց 1905 թի նախահաշիւը. մուտքը հաշված է 4703 ր. 60 կ., ծախքը՝ 4692 ր.։ Երկար վիճաբանութիւններից յետոյ վճռվեց վրաց դրամատիկական դերասանների ընկերութեանը տալ 720 ր. նպաստ։ Որոշվեց նոյնպէս կազմել վրաց ազնուականութեան թատրոնում մացնելի փոփոխութիւնների և ծախքերի ցուցակը, իսկ յետոյ միջնորդել և խնդրել ազնուականների բանկին վերանորոգել իր թատրոնի բեմը և միւս կարևոր մասերը, որոնց պակասութեան պատճառով արգելված է այնտեղ ներկայացումներ տալ։

—

Թիֆլիսի քաղաքային էլէքտրոտէխնիկը խնդրում է ուպրավային առաջարկել էլէքտրաքարշի անօնիմ ընկերութեանն անել հետևեալ 4 կարգադրութիւնները՝ իբրև միջոց խուսափելու զանազան պատահարներից։ Էլէքտրոտէխնիկը, աչքի առաջ ունենալով մինչև օրս նկատված անյարմարութիւնները և վտանգները, ենթադրում է ներմուծել հետևեալ միջոցները. 1) Պարտաւորեցնելով կօնդուկտօրներին չը թոյլատրել ճամբորդներին վագոն մտնել և իջնելը շարժման ժամանակ։ 2) Արգելել կառքերին անցնել երկու գծերի մէջ եղած մայթով։ 3) Արգելել ճամբորդներին կանգնել վագոնի առջևի մասում։ 4) Կրճատել կանգ առնելու տեղերի թիւը, որովհետև ներկայ ձևով էլէքտրական շարժումը ոչնչով գերազանց չէ ձիաքարշի նախկին փուրգոնանման շարժումից։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. Անցեալ կիրակի, ամսիս 12 ին, տեղիս ս. Յովհաննէս եկեղեցու ծխականները իրանց եկեղեցու համար սարկաւագ ընտրեցին ուսուցիչ Գրիգոր Գորգեանին, Ներսիսեան դպրոցն աւարտած. նա ընտրվեց այն պայմանով, որ ապագայում քահանայ ձեռնադրվի, հէնց որ քահանայի տեղ բացվի։ Այդ անպայման ցանկալի պէտք է համարել, քանի որ յանձին պարոնի մեր քաղաքի կրթված քահանաների թիւը կաւելանայ, կունենանք մի նոր կրօնուսոյց, որի մեծ պահանջ է զգացվում տեղական դպրոցներում, սակայն գործին ձեռնհաս քահանաները շատ քիչ են։ Բայց կան խաւարի սիրահար մարդիկ, որոնք պ. Գորգեանի միտքը տեղական հոգևորականութեան մէջ տանել չեն կարող. նրանք այժմս տնից տուն, խանութից խանութ պտտում են ու մի ինչ որ թուղթ ստորագրել տալիս նորընտիր սարկաւագի գործը խանգարել տալու համար։ Հաւատացած ենք, որ հոգևոր բարձր իշխանութիւնը այնքան հեռատես կը գտնվի, որ բնաւ ուշադրութիւն չի դարձնի այդ բողոքի վրա և ուսուցիչ Գորգեանին կը հաստատի սարկաւագութեան կոչման ու պաշտօնի մէջ ու այդպիսով մեր քաղաքի հայ ազգաբնակութեան կը տայ մի ինտելիգենտ հոգևորական»։

—

ՄԱՐԱՂԱՅԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 1-ին Մարաղա ժամանեց Թէհրանի ռուսաց բանկի կառավարիչ պ. Գրուբէ։ Ընդառաջել էին տեղիս ռուսահպատակ և պարսկահպատակ պատուաւոր հայ վաճառականները։ Ամսիս 2-ին Հաջի Սամադ Խան դատաւորը եկաւ պ. Գրուբէին այցելութեան, առաջուց ի պատիւ բարձրանուն հիւրին առաջարկելով իր անձնական զինուորական երաժշտական խումբը։ Պ. Գրուբէն երեկոյեան գնաց փոխայցի դատաւորին։ Նոյն օրը վաճառականները և տեղացի հայերը, գլուխ ունենալով տէր-Գարեգին քահանային, գնացին այցելութեան յարգոյ հիւրին։ Երեկոյեան դէմ դպրոցի տեսուչ Ա. Տէր-Վարդանեանը և պօստի կառավարչի օգնական Միրզա Նասիրը այցելեցին պ. Գրուբէին, որ ամսի 3 ին ուղևորվեց Սօվուչբուլաղ, որտեղից անցնելու է Սինա, Համադան, Թէհրան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Արտասահմանեան մամուլը՝ հաւատքեան մասին։ Արտասահմանեան մամուլի մէջ այժմ տիրապետող տօնը—դատողութիւններ են այն

մասին, թէ անհրաժեշտ է շուտով աւարտել ռուս-եապոնական պատերազմը։ Այդ ցանկութիւնը ընդհանուր է և միահամուռ։ Կարելի է ասել, որ նա արտայայտվում է նոյնչափ յամառաբար, ինչպէս առաջ ողջունվում էր լուրը պատերազմի մասին։ Ի հարկէ, մամուլի զանազան օրգանները գալիս են այդպիսի եզրակացութեան զանազան նկատումների հիման վրա, բայց գլխաւորը այն երկիւղն է, թէ պատերազմի շարունակութիւնը աղետալի հետևանքներ կունենայ։ Եապոնիայի յաղթութիւնը կը սպառնայ բոլոր պետութիւնների շահերին Ասիայում։ Ռուսաստանի յաղթութիւնն ևս չէ մտնում արևմտեան-եւրոպական քաղաքագէտների հաշիւ մէջ։ Նրանք այսպէս են մտածում. Ռուսաստանը և Եապոնիան երկուսն էլ դուրս կը գան այս պատերազմից թուլացած և որոշ չափով աւերված, կը նշանակէ մեծ պետութիւնները կօգտվեն ռուս-եապոնական կորուստներով։ Այժմ հասել է «հոգեբանական բոպէն» հաշտութիւն կնքելու։ Եթէ իրանք պատերազմող կողմերը շարունակեն կռիւը, պէտք է, «ինչպէս առաջարկում է Ժորէսը, բոլոր երկիրների պարլամենտները միաժամանակ ճնշումն գործ դնեն իրանց կառաւարութիւնների վրա և առաջ բերեն բոլոր պետութիւնների հաւաքական միջամտութիւնը՝ հաշտութիւն կնքելու համար։ Բէրլինսօն, ինչպէս գիտենք արդէն, հաւանութիւն է տալիս Ժորէսի այդ առաջարկին։ (Հ.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Ստեսսէլի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1904 թւի դեկտեմբերի 19-ից. «Երէկ առաւօտեան եապոնացիները ահագին պայթիւն առաջացրին 3-դ ամրութեան տակ և խոյոն և եթ դժոխային ռմբակոծութիւն սկսեցին ամրոցի գծի վրա։ Ամրութեան ոչ—մեծաքանակ զօրքը մասամբ կոտորվեց նրա ներսում, մասամբ կարողացաւ դուրս գալ։ Երկու ժամ տևող ռմբակոծութիւնից յետոյ եապոնացիները շտուրմ արեցին չինական պատի վրա 3-դ մարտկոցից մինչև Արծուի Բունը։ Երկու շտուրմեր յետ մղվեցին։ Մեր դաշտային արտիլէրիան շատ ճշտա հասցրեց եապոնացիներին։ Չինական պատի վրա դիմանալ չէ կարելի։ Ես հրամայեցի գիշերով հեռանալ չինական պատի ետևը գտնվող լեռները, յենակէտ դարձնելով աջ թևը Մեծ սարի մէջ։ Արեւելեան ճակատի մեծ մասը եապոնացիների ձեռքումն է։ Նոր դիրքի վրա երկար չենք դիմանայ, իսկ յետոյ ստիպված կը լինենք անձնատուր լինել. բայց ամեն ինչ Աստուծու ձեռքին է։ Մենք մեծ կորուստներ ունենք։ Գնդերի երկու հրամանատարներ՝ Գանդուրին և Սեմեոնով վիրաւորված են. հերոս Գանդուրինը շատ ծանր։ 3 դ ամրութեան հրամանատար շտաբս-կապիտան Սերեդով սպանվեց պայթումի ժամանակ։ Մեծ Թագաւոր, Դու ներիր մեզ։ Արեցինք բոլորը, ինչ որ մարդկային ոյժը ներում էր։ Դատիր մեզ *), բայց դատիր ողորմածաբար։ Համարեա տասն և մէկ ամիս տևող անընդհատ կռիւը սպառեց մեր ոյժերը։ Պաշտպանների միմիայն մի քառորդը, որոնցից կէսը հիւանդ են, գրաւած ունի բերդի 27 վերստ տարածութիւնը առանց օգնութեան, մինչև անգամ առանց մի փոքր հանգիստ առնելու։ Մարդիկ ստուերների են նմանում»։

Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան անունով 1904 թւի դեկտեմբերի 21-ից. «Դեկտեմբերի 13-ին մութը վրա հասնելուն պէս կամաւորները, պօղպօրուչիկ Դրոբիշևի հրամանատարութեամբ, անսկատելի կերպով մօտեցան եապոնական պահակախմբին Չինլինպու գիւղի մօտ, երկու վերստ դէպի հարաւ-արևմուտք Լինշինպուից։ Առանց հրացանաձգութեան կամաւորները յարձակում գործեցին սուիններով և սրի անցնելով եապոնացիների մի մասը ու գերի վերցնելով մէկին, փախուստ դարձրին մնացածներին։ Մենք կորուստներ չունեցանք։ Դեկտեմբերի լոյս 21-ի գիշերը կամաւորները, պօղպօրուչիկ Տօվսեանսկու հրամանատարութեամբ, յարձակում գործեցին եապոնացիների գրաւած Սինլունտուն գիւղի վրա երկու վերստ դէպի հարաւ երդազօյեան աշտարակից։ Կամաւորներից մի մասը գործում էր ճակատից, իսկ մնացածները շրջապատեցին գիւղը արևմուտքից և առանց հրաձգութեան, «ուրայի» աղաղակով ներս խուժեցին գիւղը թիկունքից և ետևից։ Շատ եապոնացիներ սրախողխող եղան, 12 մարդ գերի վերցվեցին, որոնցից 4 չէին վիրաւորված։ Կամաւորների հետ եղող սապէօրները հրդեհեցին գիւղը։ Մեզ մօտ թեթև վիրաւորվեց պօղպօրուչիկ բարօն Ֆրէդէրիկս և սպանվեցին 2 և վիրաւորվեցին 9 զինուորներ։ Դեկտեմբերի լոյս 21-ի գիշերը կամաւորները, պօղուչիկ Բօնինի հրամանատարութեամբ, սապէօրների աջակցութեամբ օղը թռցրին եապոնական դիտանոց-վիշկան, կործանեցին պատը իր հրամուտներով և ոչնչացրին արուեստական արգելքները ու դրին երկու ինքնապայթուցիկ ֆուգասներ Վուչժանինից դէպի հարաւ գտնվող գիւղերից մէկում։ Մեր կամաւորների հեռանալուց յետոյ ֆուգասները պայթեցին։ Վերոգրեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը»։

ՄՕՍԿՎԱ։ Դումայի այսօրվայ նիստում քաղաքագլուխը յայտնեց, որ դուման գիւղացիների ազատութեան քառասնամեակը յաւերժացնելու համար, որոշեց ի կատար ածել տարբերական ուսման հանրամատչելիութիւնը Մոսկվայում։ Այժմ քաղաքն ունի 215 դպրոց 753 բաժանմունքներով, որոնց մէջ սովորում են 29,000 մանուկներ։ Դուման որոշեց միջնորդել այն մասին, որ դատաստանական կազմակերպութիւնը վերաքննելու ժամանակ պահպանվի Մոսկվայում հաշտարար դատաւորների ընտրողական կազմը։

ՊԱՐԻԶ։ «Ժուրնալ դէ Դեբա» լրագիրն ասում է, որ թէպէտ և նախատեսվում էր Պորտ-Արտուրի անկումը, բայց նա յուզեց ամբողջ աշխարհը։ Ֆրանսիայում, քան որ և է ուրիշ տեղ, այդ դէպքը աւելի ևս կսկծալի արձագանք տուեց։ Քաղաքի հերոսական դիմադրութիւնը հերքեց այն ռազմագէտների նախագուշակութիւնը, որոնք պնդում էին, թէ ժամանակակից թնդանօթների ժամանակ բերդերի դիմադրութիւնը միայն կարճատև կարող է լինել։ Ռազմագէտները ի նկատի չէին առնում զօրքերի ոգին»։

ՊԱՐԻԶ։ «Լիբերտէ» լրագիրը ասում է. «Ստեսսէլի զինուորները դուրս կը գան Պորտ-Արտուրից փառքով։ Նրանք ցոյց տուին զարմանալի քաջութեան օրինակ, որին ընդունակ են միայն հայրենիքի սիրով վառված մարդիկ»։

ՏՕԿԻՕ, 21 դեկտեմբերի, (Ռէյտէր)։ Ստացված է գեներալ Նոգիի հեռագիրը այն համաձայնութեան բնագրով, որ վերաբերում է Պորտ-Արտուրի անձնատուր լինելուն։ 1) Թէ ցամաքային և թէ ծովային զօրքի բոլոր զինուորական պաշտօնեաները, նոյնպէս և ռուս կամաւորները և պետական ծառայութեան մէջ գտնվող տնձինք Պորտ-Արտուրի բերդապահ զօրքում և մարտկոցներում անձնատուր են լինում որպէս գերի։ 2) Բոլոր մարտկոցները, բատարէաները, պատերազմական և այլ նաւերը, զէնքը, ռազմամթերքները, ձիերը, պատերազմական նիւթը, կառավարչական շինութիւնները և առհասարակ այն բոլոր առարկաները, որոնք պատկանում են ռուսաց կառավարութեանը, յանձնվում են եապոնական բանակին իրանց ներկայ դրութեամբ։ 3) Վերոյիշեալ երկու պայմանը ընդունվելու և նրանց ապահովութեան դէպքում, դեկտեմբերի 21-ին ցերեկվայ 12 ժամին պէտք է դուրս բերվեն մարտկոցների բերդապահ զօրքերը և Իցզուշանի, Շապօցզուշանի, Տօանցզուշանի ու վերև մատնացոյց արված մարտկոցներից դէպի հարաւ-արևելք գտնվող բլուրների բատարէաները և վերոյիշեալ մարտկոցներն ու բատարէաները պէտք է յանձնվեն եապոնական բանակին։ 4) Այն դէպքում, եթէ կը նկատվի, որ ռուսաց ցամաքային կամ ծովային զօրքերը ոչնչացրել են երկրորդ յօդուածում թւած առարկաները կամ որ և է կերպ փոխված է այն դրութիւնը, ինչ դրութեան մէջ գտնվում էին այդ առարկաները դաշնագիրը ստորագրելու վայրկեանին,—դա կորցնում է իր ոյժը և եապոնական բանակը վերադարձնում է իրան գործողութեան ազատութիւնը։ 5) Ռուսաց զինուորական և ծովային իշխանութիւնները պարտաւորվում են կազմել և յանձնել եապոնական բանակին Պորտ-Արտուրի ամրութիւնների և նրանց համապատասխան զետեղման յատակագծերը, քարտէսներ, որոնց մէջ նշանակված պէտք է լինեն ստորերկրեայ և ստորջրեայ ականների, նոյնպէս և վտանգ ներկայացնող ամեն տեսակ ռումբերի դրութիւնը, ցուցակ, որից երևայ ծովային և զինուորական ծառայութեան սիստեմը Պորտ-Արտուրում, ցուցակ զինուորական և ծովային օֆիցէրների, որի մէջ ցոյց տրված պէտք է լինեն նրանց աստիճանը և պաշտօնը, փոխադրիչ և այլ նաւերի ցուցակը, որից պէտք է երևայ էկիպաժների եղած քանակութիւնը և քաղաքացիական անձանց ցուցակը, մատնացոյց անելով նրանց սեռը, ազգութիւնը և զբաղմունքը։ 6) Զէնքը, ձեռքի զէնքը, ռազմամթերքները, նիւթերը, կառավարչական շինութիւնները և այն ամեն առարկաները, որոնք պատկանում են ռուսաց կառավարութեան, ձիերը, պատերազմական և այլ նաւերը իրանց պարունակութեամբ, ի բաց առնելով մասնաւոր սեփականութիւնը, պէտք է թողնվեն այն դրութեամբ, որի մէջ գտնվում են նրանք ներկայումս։ Ռուսաց և եապոնական բանակների կոմիսարները պարտաւոր են որոշել նրանց տեղափոխութեան եղանակը։ 7) Եապոնական բանակը, պատաւոր համարելով ռուսաց զօրքի ցոյց տուած քաջարի դիմադրութիւնը, կը թոյլ տայ ռուս զինուորական և ծովային օֆիցէրներին, նոյնպէս և ռուսաց բանակի քաղաքացիական պաշտօնեաներին պահել իրանց վրա սառը զէնք և կենդանի անփոխարինելի պահանջների համար անհրաժեշտ մասնաւոր սեփականութիւնը։ Մատնացոյց արած օֆիցէրները, պաշտօնական անձինք և կամաւորները, որոնք գրաւոր աղնիւ խօսք կը տան չը վերադառնալ զօրքերի շարքը և ոչ մի կերպ չը մասնակցել եապոնական բանակի շահերի դէմ մղված գործողութիւններին մինչև պատերազմի վախճանը, թոյլատրվում է կը տանեն եապոնական բանակի կողմից վերադառնալ հայրենիք, և այդ դէպքում զինուորական և ծովային իւրաքանչիւր օֆիցէրին կը տրվի մի ծառայ-զինուոր, որին ազատութիւն կը տրվի ազնիւ խօսքով։ Ռուսաց ունտեր-օֆիցէրները և ցամաքային զօրքերի ու նաւատորմի զինուորները համազգեստներով, ստանալով վրաններ և անհրաժեշտ անձնական իրեր, կը հաւաքվեն իրանց համապատասխան օֆիցէրների հրամանատարութեամբ այն տեղում, որ ցոյց կը տայ եապոնական բանակը. եապոնական կոմիսարները կը տան անհրաժեշտ մանրամասն ցուցմունքներ այս պայմանը ի կատար ածելու համար։ 9) Եապոնացիները իրանց մօտ կը պահեն ռուսական զօրքի և նաւատորմի սանիտարական պաշտօնեաներին, որովհետև նրանց ծառայութիւնը անհրաժեշտ է ճանաչված հիւանդ և վիրաւոր գերի զինուորների վրա խնամք տանելու համար հարկաւոր ժամանակի ընթացքում։ Այդ անձինք պարտաւորվում են ծառայել եապոնական համապատասխան պաշտօնեաների ղեկավարութեամբ։ 10) Բնակիչների ապրուստը, քաղաքային ֆինանսական վարչութեան վերաբերվող գրքերի և դոկումէնտների, նոյնպէս և արխիվի տեղափոխութեան և առհասարակ ներկայ դաշնագիրը ի կատար ածելու համար բոլոր անհրաժեշտ մանրամասնութիւնները կորոշվեն լրացուցիչ համաձայնութեամբ, որը ներկայ դաշնագրի համահաւասար ոյժ կունենայ։ 11) Ներկայ դաշնագրի պատճէնները պէտք է պահվեն եապոնական և ռուսական բանակներում։ Դաշնագիրը ոյժ կը ստանայ անմիջապէս ստորագրելուց յետոյ։

23 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է Բարձրագոյն ուկազ. Ֆինանսների ժամանաժողովի առաջադրութեան համեմատ, թոյլատրված է 231,500,000 բուբլու փոխառութիւն անել։—Ի նկատի ունենալով «Наша Дни» լրագրի ճշմարտակար ուղղութիւնը, ներքին գործերի մինիստրը որոշեց յայտնել նրան առաջին նախազգուշութիւնը։ Ներքին գործերի մինիստրը որոշեց արգելել «Русь» լրագրի առանձին համարների հատով վաճառումը։

ՄԻՆՍԿ, 22 դեկտեմբերի։ Թագաւոր Կայսրը Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի և շքախմբի հետ միասին ժամանեցին առաւօտեան 10 ժամին։ Թագաւորը անցաւ կայարանի պլատֆորմայով, ուր շարքով կանգնած էին Հեռաւոր Արևելք գնացող զօրքերը։ Թագաւոր Կայսրը անցաւ զօրքի ճակատի առջև, մաղթելով բաղդաւոր վերադարձ։ Հրաժեշտը սրտաշարժ էր։ Ապա Նորին Մեծութիւնը գնաց դէպի կայարանի դահլիճը, ուր Թագաւորին դիմաւորեց Մինսկի եպիսկոպոսը, որից յետոյ նահանգի հրամանատարը պատգամաւորութիւններ ներկայացրեց Թագաւորին։ Նորին Մեծութիւնը ողորմածաբար շնորհակալութիւն յայտնեց պատգամաւորութիւններին և գնաց դէպի ուրիշ դահլիճը, ուր հաւաքված էին շատ դպրոցների սաները։ «Ուրայի» բացականչութիւնների ուղեկցութեամբ գնաց դէպի վագոնը և Արքայական գնացքը դանդաղութեամբ հեռացաւ։ Թագաւորը, կանգնած մնալով վագոնում, ողորմածաբար ողջունում էր ճանապարհ գցողներին։

ՎԷՅՀԱՅՎԷՅ, 22 դեկտեմբերի։ (Ռէյտէր)։ «Անդրօմէդա» կրէյսէրով Պորտ-Արտուր են ուղևորվում երկու վիրաբոյժներ, կառավարչական հիւանդանոցի գրեթէ ամբողջ կազմը, ուղարկում են 80 տօնն ապրանք, 33) մահճակալներ և հարիւր հազար ֆունտ ուտեստի պաշարներ։ Այդ բոլորը շտապով բեռնվեց գիշերվայ ընթացքում, հէնց որ ստացվեց պաշտօնական թոյլտուութիւնը։

ԼՕՆԴՕՆ, 22 դեկտեմբերի։ (Ռէյտէր)։ «Ռէյտէրի գործակալութեան» թղթակիցը հաղորդում է, որ բաւարարութիւն է տրված ռուսների խնդիրքին՝ ուղարկելու նրանց բժիշկներ, ուտեստի պաշարներ և դեղեր վիրաւոր հիւանդների համար։—Պորտ-Արտուրից գերիների դուրս գալու օրը յետաձգված է մինչև դեկտեմբերի 23-ը նրանց սեփական խնդիրքի համեմատ։

ՑՁԻՆԴԱՕ, 22 դեկտեմբերի։ (Վօլֆ)։ Ռուսական «Մէրլի» և «Բօյկի» հակա-ականները զինաթափ եղան այսօր առաւօտ։

ՏՕԿԻՕ, 23 դեկտեմբ.։ (Ռէյտէր)։ Նոգին զեկուցանում է, որ երէկ աւարտվեցին բանակցութիւնները երկու բանակների կոմիսարների միջև։ Այսօր առաւօտ սկսվեց պատերազմական նիւթի և կառավարչական գոյքի յանձնումը։

ՏՕԿԻՕ, 22 դեկտեմբերի։ (Ռէյտէր)։ «Ինգբէցիա» շոգենաւի վրա գտնվող ռուս կապիտան-լէյտենանտը և «Բաստօրօպնիի» հրամանատարը բաց արին իրանց ծպտեալ լինելը։ Այժմ նրանք պաշտօնապէս յայտարարված են պատերազմական գերիներ։

ՉԻՖՈՒ։ (Ռէյտէր)։ Յայտնի է դարձել, որ Ստեսսէլ հիւանդ է։ Ասում են, որ գեներալ Սմիրնով, Ստեսսէլի թոյլտուութեամբ, գրեց և ուղարկեց անձնատուր լինելու առաջարկութիւնը։—«Անդրօմէդ» կրէյսէրի ուղարկումը ապացոյց է անգլիական ծովագնացների համակրութեան և հիացմունքի սլաւեանների առաջ, որոնք այդպիսի պատով կատարեցին իրանց պարտքը։

«Դէյլի Մրօնիկլ» լրագիրը, բալտիական էսկադրայի դերի առիթով, ասում է. «Եթէ էսկադրայի անձնական կազմը լաւ է պատրաստված, այն ժամանակ այդ ձեռնարկութիւնը այնքան անյուսալի չէ, ինչպէս շատերը կարծում են։»

ՄՈՒԿԴԷՆ, 23 դեկտեմբերի։ (Սեփ. Թղթ.)։ Եապոնացիները կազմակերպեցին պօստի ամենօրեայ ստացումը ֆուզանեան ճանապարհի վրա։—Լուրերի համեմատ, Նարեանգի մօտ սկսվել է հակա-եապոնական զօրեղ շարժում։

ԼՕՆԴՕՆ։ «Ռէյտէրի գործակալութեան» թղթակիցը Տօկիօից հաղորդեց Նոգիի հեռագիրը, որ ստացվել էր կէսօրից յետոյ երեք ժամին։ «Օֆիցէրները պանպանում են կարգը Պորտ-Արտուրում։ Ազգաբնակութիւնը հանգիստ է։ Բերդի մանրազնին քննութիւնը աւարտեցինք մենք միայն երէկ երեկոյեան մօտ 8 ժամին։ Ազգաբնակութեան թիւը հասնում է մինչև 35,000, որոնցից 25,000 զինուորներ են։ Առաջին անհրաժեշտութեան մթերքներ—հաց և աղ բաւական են։ Միս և բանջարեղէններ չը կան։ Դեղեր չը կան։ Եապոնացիները ամեն ջանք գործ են դնում ազգաբնակութեանը օգնութիւն հասցնելու համար։ Անձնատուր լինելու պայմանները ի կատար ածող յանձնաժողովները երկու բանակների կողմից ամեն ջանք գործ են դնում իրանց վրա դրված գործը աւարտելու համար։

ԼՕՆԴՕՆ, 21 դեկտեմբերի։ (Ռէյտէր)։ Եապոնական միսսիան հրատարակեց հետևեալ հեռագիրը, որ ստացել է Տօկիօից դեկտեմբերի 22-ին Նոգիից. «Ռուսները, որպէս երաշխաւորութիւն կապիտուլացիայի կատարման, էսօրից յետոյ մէկ և կէս ժամին յանձնեցին մեզ Իցզուշանը և այլ մարտկոցները»։

Կ. ՊՕԼԻՍ, 22 դեկտեմբերի։ Սուլթանը Եմէն նահանգն է ուղարկում, ուր բռնկել է ապստամբութիւն, նոր օժանդակ զօրք, բաղկացած 18,000 հետևակներից, 5 արագաձիգ բատարէաներով։ Նոյն տեղն են ուղարկված մաուզէրեան 27,000 հրացաններ։

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 22 դեկտեմբերի։ Ազատամիտ

*) Բերդերի վարչութեան վերաբերեալ կանոնադրութեան 64-դ յօդուածի հիման վրա, որքան էլ փառապանծ լինի բերդի պաշտպանութիւնը և որքան էլ մեծ անձնուիրութեամբ պաշտպանութիւնը առաջ տարվի, բայց եթէ բերդը առնվի թշնամուց, նրա հրամանատարը դատի է ենթարկվում, որի կազմը որոշվում է իւրաքանչիւր անգամ առանձին Բարձրագոյն հրամանով։ Այդ դատարանից է կախված պաշտպանութեան համար բերդի հրամանատարի ձեռք առած միջոցների գնահատութիւնը և ապա որոշումը՝ թէ արդեօք բերդի անկումը պէտք է նրա յանցանքը համարվի։ (Գլխաւոր շտաբի ծանօթութիւն)։

կուսակցութիւնը ներկայ էր իր ամբողջ կազմով պարլամէնտի հանդիսաւոր փակման ժամանակ։ Դիմադրութեան անդամները բացակայ էին գահական ճառի ընթերցման ժամանակ

ԼՕՆԴՕՆ, 22 դեկտեմբերի։ «Ռէյտերի գործակալութեան» թղթակիցը եապօնական երրորդ բանակում Պօրտ-Արտուրի մօտ հաղորդում է, որ դեկտեմբերի 21-ին «ամբողջ բերդապահ զօրքը և Արտուրի ոչ-զինուորական ազգաբնակութիւնը կը հեռանայ վաղը քաղաքից Ապուտվէյ գիւղը Աղաւնու ծովախորշի մօտ։ Այստեղից օֆիցէրները կուղարկվեն Դալնի, և ապա աւելի հեռու, ուր կը ցանկանան։ Իսկ մնացած պատերազմական գերիները մինչև Դալնի, իսկ յետոյ Եապօնիա ուղարկվելը կը պահվեն այդ ազգաբնակութեան ռուսական զօրանոցներում։ Այդպէս եապօնացիների ձեռքն ընկաւ ռուսական ամենազօրեղ բերդը Հեռաւոր Արևելքում եօթամեայ պաշարումից յետոյ, որի ընթացքում եապօնացիները կորցրին աւելի քան 50,000 մարդ։ Անձնատուր լինելու վերաբերեալ յանձնաժողովի ռուս պատիրակները հետևեալ անձինքն էին շտաբի հրամանատարը գնդապետ Ռէյս, կարմիր խաչի լիազօր Բալաշէվ, մի գնդապետ, երկու ուրիշ օֆիցէր և երկու թարգման։ Բերդի անձնատուր լինելը հէնց իրանց եապօնացիների համար անսպասելի էր, որով հետև ռուսների յուսահատական վճռականութիւնը և քաջութիւնը, որ նրանք ցոյց տուեցին մինչև անգամ վերջին շտուրմների ժամանակ, կարծես ասում լինէին, որ ամրութիւնները կարող էին առնվել ոչ վաղ մէկ ամսից։

ԼՕՆԴՕՆ, 23 դեկտեմբերի։ (Ռէյտեր)։ Ծովային մինիստրը իր ճառի մէջ այն միտքը յայտնեց, որ ոչ մի բան աւելի հոյակապ չէր, քան այն հայրենասիրութիւնը, որ ցոյց տուին ռուսները և եապօնացիները։ Անգլիացիների համար, որպէս եապօնացիների դաշնակիցներ, դիւրին էր հիանալ նրանց վարմունքով, բայց մի և նոյն ժամանակ հաւասար չափով պէտք է անկեղծ հիացմունք արտայայտել ռուսների գործունէութեան եղանակի առջև։

ԼՕՆԴՕՆ։ «Ռէյտերի գործակալութեան» թղթակիցը Նոգիի բանակում հաղորդում է, որ Պօրտ-Արտուրի պաշտօնական մարմնի մէջ թողնելիք վաղը։ Եապօնացիները կը մտնեն բերդը դեկտեմբերի 26-ին և դա կը լինի մի ազգու տեսարան։ Դեկտեմբերի 28-ին եապօնական օֆիցէրները ներկայ կը լինեն բանակէտին։ Ռուսների անձնատուր լինելու պատճառը ակներև է դառնում Վանտայ մարտկոցը այցելելուց յետոյ։ Պօրտ-Արտուրի իսկական ամրութիւնները բաղկացած են արտաքին ամրութիւնների գլխաւոր գծից և Վանտայի մարտկոցին տիրելը բանալիք տուեց պաշարողներին դէպի քաղաքի արևելեան մարտկոցները, այն ինչ համբացրած բլուրները, որոնք զետեղված էին ետևը, պաշտպանում էին շտուրմերից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի հետ դեկտեմբերի 23-ին առաւօտեան 10 ժամին վերադարձաւ Պետերբուրգ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական։ Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան անունով 1904 թուի դեկտեմբերի 22-ից։ «Դեկտեմբերի լոյս 19-ի գիշերը կամաւորները խուզարկութիւն կատարեցին դէպի Բէյտացզի գիւղը երկու վերստ դէպի հիւսիս Սանդէպուից։ Առանց հրացանաձգութեան մօտենալով դէպի եապօնական պահակախմբերը, կամաւորները յարձակվեցին նրանց վրա սուիններով, և չը նայելով հակառակորդի հրացանային զօրեղ կրակին Բէյտացզիից և պահակներից, ներս խուժեցին այդ գիւղը և հրդեհեցին երեք ֆանզաներ, որոնք բէդուտներ էին ծառայում Բէյտացզիի գարնիզոնին։ Հակառակորդի գնդակների տակ կամաւորները հեռացան դէպի մեր պահակները։ Վերոգրեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեան»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուտով լոյս կը տեսնի
Գ. ՄԱՆՏԵԳԱՑՑԱՑԻ
«ՀԻԱՆԴ ՍԷՐ»
բ. տպագրութիւն։ Դիմել՝ Александрополь, священику Ерванду Налбандянъ. ե. հ. շ. 5—5

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Ձեռնարկութիւն Կայսերական թատրոնների
արտիստ Լ. Դ. Դօնսկոյի

ՏՕՆԱԿԱՆ ՐԷՊԷՐՏՈՒԱՐ

Դեկտեմբերի 26-ից մինչև յունվարի 1-ը 1905 թ. Կիրակի, դեկտեմբերի 26 ին 2 ներկայացում։
Ցերեկվայ, հանրամատչելի գներով
Կը ներկայացվի
ՖԱՈՒՍՏ
օպերա 5 գործ. երաժ. Գունօի։

Գիշերվայ մասնակցութեամբ Լ. Դ. Դօնսկոյի կը ներկայացվի «ՊԻԿՕՎԱՅԱ ԴԱՄԱ» օպ. 3 գործ. և 7 պատկ. երաժ. Չայկովսկու։

Երկուշաբթի, դեկտեմբերի 27-ին 2 ներկայացում։ Ցերեկվայ. հանրամատչելի գներով կը ներկայացվի «ԵՎԳԵՆԻՅ ՕՆԷԳԻՆ» օպերա 3 գործ. 7 պատկ. երաժ. Չայկովսկու։ Գիշերվայ ներկայացում. կը ներկայացվի «ՍՆԵԳՈՒՐՕՉԿԱ» օպերա 4 գործ. Նախաբանով երաժ. Ռիմսկի-Կարսակովի։

Երեքշաբթի, դեկտ. 28-ին գիշերվայ ներկայացում մասնակցութեամբ Լ. Դ. Դօնսկոյի կը ներկայացվի «ՆԵՐՕՆ» օպ. 4 գործ. երաժ. Ռուբինշտէյնի։

Չորեքշաբթի, դեկտեմբերի 29-ին վրաց դրամատիկական ընկ. ներկայացում։

Հինգշաբթի, դեկտ. 30 ին գիշերվայ ներկայացում, մասնակցութեամբ Լ. Դ. Դօնսկոյի. կը ներկայացվի ՄԱՆՕՆ, օպեր. 5 գործ. երաժ. Մանսէնէի։

Ուրբաթ, դեկտ. 31-ին կը ներկայացվի 1) ՍԵՎԻԼՍԿԻ ՑԻՐՈՒԼՆԻ, օպեր. 3 գործ. երաժ. Բոսսինի. 2) ՆՈՐ ՏԱՐՎԱՑ ԴԻՄԱՒՈՐՈՒՄԸ և ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ։ Լօժանեբում, պարտէրում, ամֆիտէատրում և 2-դ ու 3-դ հարուսների բալկօնում տոմսակ վերցնողները իրաւունք ունեն մնալ դիմակահանդէսում։

Շաբաթ, յունվարի 1-ին 1905 թուի. կը ներկայացվի «ԲՕԿԱՋԻՕ», կօմիքական օպերա, 3 գործ. երաժ. Զուպպէի։

Առաւօտեան ներկայացումների սկիզբն է ցերեկվայ 12½ ժամին, իսկ երեկոյեանները երեկոյեան 8 ժամին։

Տօմսակները ծախվում են։
(հ. շ. շ.) 2—3

ՇՔԵՂ

Լոյս տեսաւ «ՇՔԵՂ»-ի Ե. պրակը, տասը գեղարուեստական նկարներով, արժէ 1 ր. 20 կ. տասնեակով գնողին հատը 1 բուբլի։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

մի այլ գեղարուեստական ընտիր հրատարակութիւն տպագրված խաւաքարտի վրա (բրիստոլ կարտոն)

ՏԱԽՏԱԿ ՕՐԱՑՈՅՑ 1905 թ.

Տ. Սիրանոյշի 30-ամեայ բեմական գործունէութեան յիշատակին, 30×40 սմ. մեծութեամբ, զանազան դերերի մէջ և քաղաքացիական տարազով։

Արժէ Թիֆլիսում . . . հատը 20 կ.
Իսկ գաւառների համար . . » 25 »

(Գաւառից 10-ից պակաս պատուէրները չեն կատարվում),
իսկ 10-ից աւելին կը հաշվի հատը . 20 կ.
Ալբոմ և Օրացոյց միասին գնողին՝ Օրացոյցը կարժենայ . . . 10 »

Նպատակայարմար տօնական ընծայ կարող են լինել մեր Ալբոմները, Հայ գործիչների բաց նամակները (130 տեսակ—100 ով՝ 2 ր. 50 կ։ իսկ 1000-ով՝ միայն 20 ր.), Օրացոյցը և այլ ընտիր գեղարուեստական հրատարակութիւնները։ Շտապեցէք դիմել մեզ հետևեալ հասցէով. Тифлисъ, фототипія Гнуни—Маримъ. 5—15

ԲԺԻՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին ординаторъ Մոսկվայի համալսարանի կլինիկայի

Ընդունում է յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 6—8 ժամին երեկոյեան։ Բարիշևսկի № 1, «Պօժարնի կօմանդի» դիմացը. տելէֆօն № 11. 8—10

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Կիրակի, դեկտեմբերի 26 ին
Տեղի կունենայ

Պօղ. Կարա-Մուրզայի ՀԱՄԵՐԳԸ

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։
Տոմսակները 3 ր. 60 կօպէկից մինչև 50 կօպ.։ Վաճառվում են Ա. Ն. Լիսինովի և Ի. Վ. Աբովեանցի խանութներում, Երևանեան հրապարակի վրա և ժողովարանի շվեյցարի մօտ։
(կ. ու. կ.) 2—3

Տիկին Մ. Մակարեանի Մրցանակի Յանձնաժողովը

յայտարարում է ի գիտութիւն բոլոր հայ գրագէտների, որ հանդուցեալ տիկ. Մակարեանի կտակի համաձայն հայերէն լեզուով գրված ինքնուրոյն թատերական երկերի համար նշանակած է երկու մրցանակ, իւրաքանչիւր մրցանակի գումարն է 150 բուբլի։

Մրցանակին մասնակցելու պայմանները են.

1) Գրուածքը պէտք է լինի հայերէն և դեռ ոչ մի հայկական բեմի վրա չը ներկայացված կամ միայն վերջին սեզօնում ներկայացված։

2) Գրուածքը պէտք է ուղարկել Թիֆլիսի Հայոց Դրամատիկական ընկերութեան վարչութեան հասցէով (Тифлисъ, Барятинская, № 8, кн. М. М. Тумановой)։

3) Գրուածքը պէտք է ուղարկվի մինչև առաջիկայ 1905 թ. օգոստոսի 20-ը. այդ թուից յետոյ հասած պիէսը կը մնայ հետևեալ տարվայ մրցութեան։

4) Գրուածքը կրելու է իր վրա հեղինակի որ շած կեղծ անունը կամ մի բնաբան (էպիգրաֆ) և հետն ունենալու է նոյն կեղծ անունը կամ բնաբանը կրող մի երկրորդ փակ ծրար, որի մէջ պէտք է լինի հեղինակի իսկական անունը և հասցէն։ Երբ գրուածքը դատվի մրցանակի արժանի, այն ժամանակ կը բացվի երկրորդ ծրարը և կիմացվի հեղինակի իսկական անունը և հասցէն։ Մրցանակի արժանի չը դատված երկերի անունները յանձնաժողովը՝ առանց երկրորդ ծրարը բանալու և հեղինակի իսկական անունը իմանալու կը յայտարարէ, որ տէրերը բարեհաճեն որ և է ձևով յետ ստանալ։ 1904 թ. ներկայացրած պիէսներից ոչ մէկը չէ արժանացել մրցանակի։
(16, 22, 30) 3—2

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Սրանով հրաւիրում է պ. պ. փայատէրերին ընդհանուր ժողովի, որ տեղի է ունենալու կիրակի, յունվարի 2-ին 1905 թուի, առաւօտեան 10 ժամին, Վարչութեան շինութեան մէջ, Երևանեան հրապարակ, տ. Խարազովայի։

Զբաղմունքի առարկաներն են.

1) Ծանուցումն Թիֆլիսի Առևտրական Նաւթարդիւնաբերական ընկերութեան կանոնադրութեան տեղի ունեցած հաստատութեան մասին։ 2) Ընկերակցութեան ձեռնարկութեան փոխանցման եղանակը ակցիոներական ընկերութեան։ 3) Վարչութեան զեկուցումը ընկերակցութեան գործերի դրութեան մասին։

Ներկայ տարվայ դեկտեմբերի 28-ից ակցիոնէրական ընկերութեան կանոնադրութեան տպագրված օրինակները կը տրվեն Ընկերակցութեան պ. պ. փայատէրերին վարչութեան գրասենեակում 10 ժամից մինչև 2½ ժամը կէսօրից յետոյ։

Եթէ ընդհանուր ժողովը չը կայանայ ձայների սահմանված թիւ չը գալու պատճառով, այն ժամանակ երկրորդ ժողովը նշանակվում է նոյն տեղը, կիրակի, նոյն տարվայ յունվարի 9-ին, առաւօտեան 10 ժամին, որը կայացած է համարվում ձայների որքան էլ թիւ լինի։

Վարչութիւնը սրանով և ԼԹ ծանուցանում է պ. պ. փայատէրերին, որ համաձայն ընկերակցութեան պայմանագրի § 6-ի, նա նշանակել է 50%-ական վճար, 5-ական բուբլի իւրաքանչիւր փայի համար։

Փողերի ընդունելութիւնը կը կատարվի վարչութեան գրասենեակում 10-ից մինչև 15-ը յունվարի 1905 թ., 10-ից մինչև 2½ ժամը ցերեկվայ և 6 ից մինչև 8 ժամը երեկոյեան։
(կ. ե. չ.) 3—3

Ց. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

I

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ

հայերէնից ռուսերէն

Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ պրակը Գինը 1 ր.։

Բառարանի բաժանորդագրենը ճանապարհածախսով 5 ր., Ռուսերէնից հայերէն բառարանիս բաժանորդների համար 4 ր.։

II

ՀԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ

ռուսերէնից հայերէն։

Լոյս տեսաւ ԵՕԹԵՐՈՐԴ պրակը, գինը 1 ր. 20 կ.։ Բաժանորդագրենը ճանապարհածախսով 7 ր.։ Բացված է բաժանորդագրութիւն նաև ռուսերէնից հայերեն առձեռն բառարանի համար։ Բաժանորդագրենը 2 ր. 50 կօպ.։

Գաւառներից և օտար քաղաքներից պէտք է դիմել ուղղակի ինձ հետևեալ պարզ հասցէով. Тифлисъ, А. С. Дагбашяну. Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել «Գուտենբերգ» գրախանութում։ 5—6

ԱՏԱՄՆԱԲՈՅԾ

Ս. Ա. Ստեփանեան

Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7, Վելեմինսկայա փ. № 8.

Մելիք-Խախտամեան եւ ընկ.

Գուշկինեան փողոց
առաջիկայ տօների առիթով առաջարկում է

ԼՕՌՈՒ ՄԵՂՐ

30 կ. ֆունտը, 11 բուբլի պուդը կարագ I տեսակի 60 կ. ֆունտը։ Զանազան տեսակ պանիրներ։ 4—10

ԲԺԻՇԿ Ս. Զ. ՄԻՐԶՈՅԵԱՆ

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր, ժ. 2—3 և 5—7 երեկոյեան, իսկ տօն օրերին առաւօտեան ժամը 10—11. Սօլօլակի փող. № 6.
(ա. օ.) 24—50

Լոյս տեսաւ
Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ
ժողովրդական առակներ
ա) ՄՕԼԼԱ-ՆԱՍՐ-ԷԴ-ԴԻՆ
բ. տիպ. գինն է 25 կ.
բ) ՀՈԲՈՍ
Գինն է 5 կ.
դիմել՝ Е. Лалаянцъ, Тифлисъ, Саперная 5. 2—3

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱԶՈՒՍՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց դասարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։

Պարապմունքի առարկաներն են.

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղագրութիւն։ 6) Թուաբանութիւն համարէի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Ռէմինկտոնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործիչ մասնագէտ մարդիկ, որոնք հաստատվել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան։ Պարապմունքները սկսվում են 1905 թուի յունվարի 15-ից պարբերաբար ամեն 4½ ամիս, ամենայն օր ճաշից յետոյ 60 բուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատստատներ։

Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր որուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абрамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։

Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կօպէկ։ (հ. կ. ե.) 7—20

Дозволено цензурою. Тифлисъ, 23 го декабря 1904 г. Ցպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мад. ул. № 15.